«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Բնապահպանությունը որպես մարդկության գլխավոր հիմնախնդիր, կրթությունն ու դաստիարակությունը դպրոցում

Առարկան՝ Աշխարհագրություն

Հետազոտող ուսուցիչ՝ Քրիստինե Բեժանյան

Ուսումնական հաստատություն՝«ՀՀ Լոռու մարզի ք. Ալավերդու Հովհաննես Թումանյանի անվան հ. 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն----------3

1. Ինչ է բնապահպանությունը. Հասկացությունը և տերմինը ----------4

1.1Բնապահպանությունը որպես մարդկության գլխավոր հիմնախնդիր. Ո՞րն է հիմնական վտանգը----------6

2. Բնապահպանական հիմնախնդրի կառուցվածքը----------9

2.1 Սոցիալ-քաղաքական ուղղության բնապահպանական հիմնախնդիրներ---------10

2.2 Էկոլոգիական ուղղության բնապահպանական հիմնախնդիրներ----------11

3. Բնապահպանական հիմնախնդրի լուծման ուղիները----------12

3.1 Համամոլորակային մտածողությունը որպես փակուղիներից դուրս գալու միջոց12

3.2 Արտադրության և սպառման էկոլոգիական կուլտուրան, որպես բնապահպանական հիմնախնդիրների լուծման միջոց----------31

4. Բնապահպանության կրթումն ու դաստիարակումը դպրոցում:----------15

4.1 Սոցիալական էկոլոգիա----------15

4.2 Տեխնապաշտական մտածելակերպի հաղթահարումը՝ որպես կրթական համակարգի առաջնային գերակայություն:----------16

Եզրակացություն և առաջարկություն----------18

Գրականություն----------20

Ներածություն

Բնությունը կատակներ չի ընդունում, նա միշտ ճշմարտացի է, միշտ լուրջ, մշտապես խիստ. Նա միշտ արդարացի է, իսկ սխալմունքներն ու մոլորությունները բխում են մարդկանցից:

Յոհան Վոլֆգանգ Գյոթե

Իր ընթացքի ակունքներում է մարդկության նոր քաղաքակրթության երրորդ հազարամյակը: Նախորդ հազարամյակների հասարակական տագնապների թվում իր կայուն տեղն է զբաղեցրել բնապահպանականը:

Թվում է, թե մարդկությունը, չկանխատեսելով սեփական ոչնչացումը, արագընթաց շարժվում է դեպի այդ «նպատակը»: Բանականությունից դուրս է, տրամաբանությունից զուրկ, է ինչու՛, գիտակցելով, որ կենսոլորտի ռեսուրսներն անվերջ չեն, և սահմանափակ է կենսաապահովման բնական համակարգի տնտեսական տարողականությունը, հողագնդով մեկ թափոնների աճն ու հումքի տեղափոխումները հղի են անկանխատեսելի հետևանքներով, որ պատերազմը սոցիալական բախումների հանգուցալուծման լավագույն միջոցը չէ, որ մարդուն, ի շահ հասարակության, ինքնադրսևորման հանրավարությունների զրկելը բումերանգի պես շրջվում է ի՛ր իսկ՝ հասարակության բեմ, հանգեցնում նրա դեգրադացմանը և այլն, այս ամենով հանդերձ մարդը լուրջ քայլեր չի ձեռնարկում իր փրկության ուղղությամբ: Ավելին, օգտագործելով գիտության և տեխնիկայի նորագույն նվաճումները բնության հանդեպ անզուսպ ու անխելամիտ ներխուժմամբ աճապարում է դեպի սեփական կործանում՝ միամտորեն կարծելով, թե նման բան երբեք տեղի չի ունենա:

Այսօր,երբ մարդը հասել է բնության հետ համագոյակցության վտանգավոր ճամփաբաժանի, ինչպես ամբողջ աշխարհում,այնպես էլ ամեն երկրում ընթացող քաղաքական , սոցիալ-տնտեսական գործընթացները նոր մոտեցումներ են թելադրում նաև բնապահպանության բնագավառում:

Բնապահպանությունը որպես մարդկության գլխավոր հիմնախնդիր, կրթությունը և դաստիարակությունը դպրոցում:

Եթե մենք ցանկանում ենք փոխել աշխարհը, ապա նախ և առաջ պետք է փոխենք Մարդուն, նրա որակների և արժեքների համակարգը:

Ա. Պեչչեի

1. **Ինչ է բնապահպանությունը. Հասկացությունը և տերմինը**

Մարդու և բնության փոխկապակցվածության համակողմանի իմաստավորման օրըստօրե կարևորվող հանգամանքը, որպես տնտեսական, սոցիալական, քաղաքական, փիլիսոփայական, նաև՝ բարոյավարքային ու էթիկական և բազում այլ հիմնահարցերի համալիր, իր վրա է սևեռել մարդկային միտքը, բնական և հասարակական արդի գիտությունների ուշադրությունը, որոնց հատույթում էլ բնապահպանական սահմանների ընդլայնմամբ ձևավորվում է ժամանակակակից էկոլոգիան:

Միլիոնավոր տարիների պատմություն ունի մարդ-բնություն փոխհարաբերությունը, որը սկիզբ է առել բանական արարածի գոյավորման պահից, շարունակվում է մինչև մեր օրերը: Ու դեռ պիտի հարատևի, քանի որ հողագնդի վրա գոյատևում են մարդն ու մշտահոլով բնությունը…

Արդի քաղաքակրթության առջև ծառացած հիմնահարցերի շարքում ավելի ու ավելի է մեծանում բնական միջավայրի նկատմամբ «մարդկային» վերաբերմունքի տեսակարար կշիռը: Այսօր բանական միտքը հուզում է բնության վրա մարդու աննախադեպ բազմատեսակ , հաճախ՝ ոչ խելամիտ ներգործության հետևանքով գոյավորվող վտանգը: Գնալով ավելի ու ավելի բարձր է հնչում ընդհանրապես համամարդկային և հատկապե՛ս բնության հետ համակեցության համակարգային փոփոխությունների անհրաժեշտության մասին աղաղակը: Ուժեղանում է մարդու՝ համաշխարհային էկոլոգիական քաոսը ներխուժելու փոխարեն ներդաշնակության փնտրտուքը: Այս ծեր մոլորակի վրա այլևս չկա որևէ անկյուն , որտեղ չդիտվեն մարդու տնտեսական (իսկ հաճախ ՝ անտնտեսվար) գործունեության հետքերը:

Զուտ գոյապահպանման միջավայր դիտելուց բացի՝ մարդը ժամանակի ընթացքում հոգատարություն է ցուցաբերել բնության՝ բուսական և կենդանական աշխարհի նկատմամբ՝ աստիճանաբար ձևավորելով փոխազդեցության որոշակի կուլտուրա: Ժամանակի ընթացքում այդ կուլտուրան դարձել է յուրաքանչյուր ժողովրդի ազգային ընդհանուր մշակույթի կարևորագույն ստորոգելին, քանի որ որոշակի էթնիկական միջավայր թափանցելով ու ներառելով տվյալ ազգի իդեալները, ավանդույթները, սովորույթներն ու ազգային մտածողությունը, էկոլոգիական կուլտուրան սկսում է դրսևորվել ազգային ձևերի միջոցով, որոշակիորեն «ազգայնանում» և ազգային իմաստ է ստանում :

Բնության պահպանությունը պետական ու հասարակական միջոցառումների համալիր է , որի նպատակն է պահպանել բնական հարստությունները, նպաստել դրանց վերարտադրմանը և ապահովել արդյունավետ օգտագործումը: Կանխել բնության վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցությունները, ապահովել մարդու և բնության կենսագործունեության ներդաշնակությունը:

Բնության պահպանության խնդիրներն են՝

1. *ապահովել մարդկանց ապրելու և կենսագործունեության համար պիտանի բնական միջավայր,*
2. *պահպանել բնական գենոֆոնդը, նպաստել կենդանական ու բուսական աշխարհների հարստությունների վերարտադրմանը,*
3. *պահպանել բնատարածքային համալիրների ընդհանուր էկոլոգիական հավասարակշռությունը և լանդշաֆտների բազմազանությունը,*
4. *պահպանել և արդյունավետ օգտագործել օգտակար հանածոների պաշարները, ապահովել դրանց համակարգված և անթափոն շահագործումը,*
5. *պահպանել հազվագյուտ բնական համալիրները և ազգային ժառանգություն հանդիսացող պատմամշակութային ու գեղագիտական բնական արժեքները:*

1.1 Բնապահպանությունը որպես մարդկության գլխավոր հիմնախնդիր. Ո՞րն է հիմնական վտանգը

Այս աշխարհը մենք չենք արարել, սակայն այդ աշխարհում հիմնական ապրողները մենք ենք:

Ժողովրդական իմաստություն

ՄԱԿ-ի նստավայր-շենքի ճակատին 100 լեզվով գրված է Արևելքի մեծ բանաստեղծ Սաադիի՝ համամարդկային ապրումակցություն ու փոխըմբռնում արտահայտող բանաստեղծական տարողունակ բանաձևը. « Մարդկությունն ընդհանուր օրգանիզմ է, երբ կյանքը հարվածում է այդ օրգանիզմի հատվածներից որևէ մեկին, ցավում են մյուսները» :

Այսօր ամենուրեք խոսվում և գրվում է շրջակա միջավայրի, դրա խոցելիության մասին, այն մասին, որ անհրաժեշտ է միլիոնավոր տարիների ընթացքում ձևավորված բնական տարրերի և բնատեսքերի վիճակը , որտեղ ներգրավվում է մարդը՝ նրա հոգեզավակն ու բարձրագույն տիրակալը, հավասարակշիռ տեսքով պահպանել: Սակայն հաճախ, իներցիայի ուժով գիտատեխնիկական առաջադիմության ընթացքում անտեսվում է և դրա իրական բնույթը, սոցիալական հայտնի պայմաններում գերապատվությունը տրվում է միայն բնական ռեսուրսների օգտագործման համար մարդու ստեղծած տեխնիկական միջոցների հզորությանը: Վերջինս ինչպես հայտնի է , հանգեցնում է գոյավորված համակարգերի խախտմանը՝ դրանից շրջակա միջավայրի մեկ կամ մի քանի բաղադրամասի կորզման-վերացմանը, դարերով գոյավորված կենսաբանական նյութափոխանակության շրջանառության խախտմանը՝ ամբողջ մարդկության համար կործանարար հետևանքներով հանդերձ:

Բոլորն են համակարծիք, որ այսօր մարդկությունը մոտենում է իրա զարգացման ճգնաժամային պահին, երբ շրջակա միջավայրի, մոլորակի, բնության, տիեզերքի ամբողջ կառուցվածքում իր կենսագործոնեության հետևանքով արմատական

հաճախ՝ անդառնալի փոփոխություններ են սպասվում: Ահա թե ինչու տեղի ունեցող և գալիք խորն ու արմատական փոփոխությունները էկոլոգիան դասել են առավել սուր հիմնահարցերի շարքը:

Հողագնդի վրա կյանքի ծագման ու պահպանման համար անհրաժեշտ է եղել և հրատապ է մնում բազմաթիվ գործոնների զուգակցումը, որոնք են՝ ջրի, թթվածնի, ածխաթթու գազի, տիեզերական ձգողության ուժերի գոյությունը, տիեզերիական ճառագայթներից պաշտպանությունը և այլն ու բացի այդ բոլորը՝ կայունության հարյուր միլիոնավոր տարիներ: Իսկ այդ ամենը անխելամտորեն անտեսվում է: Արևմուտքում այս թեմայով հրապարակվող գիտական գրականությունը լույս է տեսնում երկիր մոլորակի էկոլոգիական վիճակի ու երկրի ապագայի նկատմամբ ահազանգ հնչեցնող խորագրերի ներքո՝ «Մեր թալանված մոլորակը», «Դեպի ողջ մնալը տանող ուղին», «Երկրի ճակատագիրը կշեռքի նժարին», «Ի՞նչ է սպասում մեզ վաղը», «Ազգագրական ռումբը», «Ինքնակործան սերունդ», «Մարդկային բանականության մթագնում», «Աճի սահմանները» և այլն:

Գիտաէկոլոգիական վերլուծությունները ծնում են հույսի, նաև՝ հոռետեսության զգացում: Այսօր մարդկությունը բնության նախասահմանած օրինաչափությունները խախտելու հետևանքով ընդհարման մեջ բնության, իրեն շրջապատող միջավայրի, կենդանի ու անկենդան բնության բնական օրենքների հետ:

Բոլորն են խոստովանում, որ շրջակա միջավայրի և, ընդհանրապես, երկիր մոլորակի հետ իրական փոխհարաբերություններում կատարվող դրամատիկ փոփոխությունների հիմնական պատճառներից է գիտատեխնիկական հեղափոխությունը: Վերջինս մարդկությանը հնարավորություն ընձեռեց՝ գրեթե աներևակայելի չափերով ներազդելու շրջակա աշխարհի վրա, այրելով, պատառ-պատառ անելով, արդյունահանելով ու ձևափոխելով մոլորակը կազմող ֆիզիկական նյութը:

Այսօր դա սպառնում է խախտել մարդկային քաղաքակրթության և երկրի բնական հաշվեկշիռը: Այո,՝ այդ ամենն անզուսպ ինդուստրացման արդյունքն է, որը, ինչպես հավատացնում են մեզ ուղղված է մարդու բարեկեցությանը:

Երբ սկսում ենք խորհել արդի գլոբալ հիմնահարցերի շուրջ, առաջինը , որ ծառանում է մեր առջև՝ կենսոլորտի զարմանալի անկայունությունն է. ներկա պայմաններում բավական է, որ մարդն անի մեկ անզգույշ քայլ, որ շրջակա միջավայրի գործընթացներն անշրջելի դառնան՝ ընդհանրապես բացառելով մարդկային հասարակության ապագայի մասին բոլոր տեսակի հավաստիացումները: Առանց չափազանցության՝ ներկա, թերևս նաև մեզ հաջորդող ևս մեկ սերնդից է կախված, թե արդյոք մեր հողագունդը կմնա՞ մարդաբնակ: Այս տեսապատկերի վրա շրջակա միջավայրի պաշտպանությունը դիտվում է որպես մարդկային քաղաքակրթության գոյության և հարատևման գլխավոր գործոն: Էկոլոգիական անհրաժեշտությունը հրամայաբար թելադրում է մարդկային քաղաքակիրթ նոր հարաբերությունների որոնում: Մշակվում են համապատասխան միջազգային մոտեցումներ միասնական քաղաքականության հիմնադրույթներ: Որպես արդյունք՝ ձևավորվում է համամարդկային նոր մտածողություն ու աշխարհայացք, սկսում են գործել միջազգային նոր չափանիշներ; Եվ վաղուց էր հարկավոր հասկանալ, որ այս կամ այն երկրում շրջակա միջավայրի վիճակը տվյալ պետության սոցիալապես առողջ կամ անառողջ կացության, ժողովրդի էկոլոգիական կուլտուրայի հայտանիշն է:

Հիրավի մարդկությունը երբևէ այդքան բազմատեսակ զենք ու զինամթերք չի արտադրել, որքան 20-րդ դարում: Դժվար է պատկերացնել, թե որքան կործանարար կարող է լինել են լինել կենսաբանական , քիմիական, ատոմային և զանգվածային բնաջնջման նման զենքները: Արբանյակային ու համակարգչային սարքավորումներն այսօր հնարավորություն են ընձեռում հրթիռային դիպուկ կործանարար հարված հասցնել Երկրի վրա գտնվող ցանկացած «թիրախի»:

Հայտնի է, որ շրջակա միջավայրին առանձնապես լուրջ ,երբեմն անվերականգնելի վնաս է հասցնում արդյունաբերությունը. Վիթխարի քանակով բնական նյութերի տեղափոխումն արմատապես խախտում է էկոլոգիական հավասարակշռությունը: Միլիոնավոր տարիների ընթացքում բնությունը կուտակել է արժեքավոր հումք՝ ածուխ, նավթ,գազ: Հետևապես, ապագայում բնակչության

կարիքներն ապահովելու համար անհրաժեշտ կլինի էներգիա ստանալ՝ վերստին բարբարոսաբար նավթ և այլ հանածոներ այրելով, ածխաթթու գազ արտանետելով:

2. Բնապահպանական հիմնախնդրի կառուցվածքը

Բնապահպանական հիմնախնդրի ողջ համալիրը կարելի է պայմանականորեն խմբավորել աշխարհում մարդու գոյության միջոցը նկարագրող հիմքերի շուրջ. Դրանք են. «մարդ- տեխնիկա» «մարդ-մշակույթ» փոխադարձ կապերը:

Մեզ հետաքրքրող «մարդ-բնություն» կապը ճիշտ հասկանալու համար արժե մյուս երկուսին փոքր-ինչ ծավալուն անդրադառնալ, քանի որ վերոհիշյալ փոխադարձ կապերի յուրաքանչյուր համակարգում յուրատեսակ է դրսևորվում մարդկությանն սպառնացող վտանգը:

«Մարդ- տեխնիկա» համակարգում այդ վտանգը զանգվածային ոչնչացման զենքի զենքի տարբեր տեսակներն են (միջուկային, ջերմամիջուկային, լազերային և այլն), ինչպես նաև չմտածված սահմանված օրենքներին չհամապատասխանող տեխնիկայի, նյութական արտադրության տեխնոլոգիաների զարգացումը:

«Մարդ-մշակույթ» համակարգն արտացոլում է մարդու էության բնութագրումները: Ազգային մշակույթների միատեսակացման վտանգը , դրանց բազմակերպության սահմանափակումը կարող են հանգեցնել մշակութային միջավայրի մարդու մեջ մարդկայինը ձևավորող միջավայրի աղքատացման: Տեխնիկայի էվոլուցիայի առանձնահատկությունները, տեխնիկական զարգացումը կապված են հոգևոր մշակույթի տարբեր գումարելիների հետ: Ավելին՝ ամբողջությամբ կենսոլորտը մշակույթի տարր է կազմում, մշակույթի նյութական հիմնակազմիչներից է: Հայտնի է, որ տեխնիկան, մշակույթը խարսխվում են բնության տեսական և գործնական յուրացման վրա:

Ուստի համընդհանուր հիմնախնդիրների համակարգում առանցքային տեղ ունի բնապահպանական հիմնահարցը, որն արտահատում է «մարդ- բնություն» համակարգում առկա հակասությունները: Բնապահպանական հիմնահարցի հիմնարար բնույթն այն է, որ մշակույթի ցանկացած տեսակի և ձևի զարգացման

համար սկզբունքորեն անխուսափելի են ամբողջությամբ վերցրած բնության վերափոխումը, միլիոնավոր տարիներ գոյավորված կենսոլորտի բնական առանձնահատկությունների ու հարաբերակցության խախտումը:

2.1 Սոցիալ-քաղաքական ուղղության բնապահպանական հիմնախնդիրներ

Այլևս կասկածներ չկան, որ մարդկային մտքի նվաճումներն այսօր մեծ սպառնալիք են հենց իրեն՝ մարդկությանը: Խոսքը նախ՝ սոցիալ-քաղաքական, բարոյաիրավական, մարդու ֆիզիկական առողջության, նրա սոցիալական միջավայրի ձևախեղումների և, ընդհանրապես մարդկային բնականոն համակեցության հիմնահարցերի մասին է: Վերջիններիս թվում են՝

- արագընթաց գլոբալացումը

-արտադրության վտանգավորությունը

-բնակչության աճի աննախադեպ «բռնկումը»

-մահաբեր զենքի տեսակների ստեղծումը

-անբուժելի հիվանդությունները

- աղքատների բևեռացված անհավասարությունը

- հակամարտությունները

- ցեղասպանությունը

Մարդկությանը նաև սպառնում է անհատական և պետական բարոյական անկումը , որը շատ դեպքերում դրսևորվում է իրավունքի և օրենքի հիմնական իդեալների հակադրության խոր դրսևորմամբ, սպառողական անձնապաշտությամբ, հանցագործությունների, ալկոհոլամոլության ու թմրամոլության տարածմամբ և ահաբեկչության աճով, որը սպառնում է անկառավարելի դառնալ…

Սակայն «ներքին» այս հիմնահարցերն ունեն արտաքին կողմ,որն առընչվում է լայն իմաստով բնապահպանության հետ. չեն ստեղծվել դրանց կիրառումը կարգավորող բարոյաիրավական չափանիշներ:

Աշխարհի ապագայի առումով այս ամենի մասին մտորելիս մարդուն ուժեղ և

հակասական զգացումներ են համակում: Քաղաքագիտական- փիլիսափայական միտքը շփոթմունքի մեջ է, կրոնականը՝ անորոշության: Ներքին ու արտաքին վտանգներին, բնության արհավիրքներին դիմագրավելու, մարդածին նոր խնդիրներ չստեղծելու համար մրդը պետք է պատրաստ լինի բնապահպան իր գիտելիքներով :

2.2 Էկոլոգիական ուղղության բնապահպանական հիմնախնդիրներ

Առավել կարևոր են նաև զուտ էկոլոգիական բնույթի, շրջակա միջավայրի հետ կապված խնդիրները: Դրանք սերտորեն կապված են առաջին խմբի հիմնահարցերին և հանդես են գալիս միահյուսված: Այդ խնդիրներն են.

- համաշխարհային կլիմայի ջերմացումը

-օզոնային շերտի նվազումը

- «թթվային անձրևները»

-ջրային և օդային ավազանի որակական փոփախությունները

-անտառատարածքների և կենսաբանական տարատեսակության կրճատումը

-հողերի դեգրադացիան և անապատացումը

-միջավայրում և օրգանիզմների մեջ պոլյուտանտների կուտակումը

-սննդամթերիք և էներգետիկական հիմնախնդիրները

Պատմության ընթացքի մեծ ժամանակահատվածում մարդկությունն ինքնահաստատվել ու պայքարել է, ձգտելով վերահսկելու գոյության արտաքին գործոնները: Սակայն անցյալում մարդը բնության վրա չէր կարող ազդեցություն գործել կամ էլ՝ նշմարելի հետք թողնել , առավել ևս՝ էկոլոգիական միջավայրն իր ունեցած պարզունակ գործիքներով խաթարել:Այսօր հատկապես նոր վտանգ են միջուկային ահաբեկչությունը, արհեստածին մահացու վիրուսները, գենային ինժեներիան: Այս ամենը կարող է լինել ինչպես անզգույշ սխալի, այնպես էլ կանխամտածված գործողության հետևանք:

Ժամանակի ընթացքում այս ամենին գումարվել ու հասարակական-քաղաքական

միտքն ալեկոծում են նաև կենսագործունեության ներքին գործոնները՝ ծնելիության ու մահացության վերահսկման, կյանքի տևողության, առողջապահության, արտաքին տեսքի կատարելության, ինտելեկտի բարձրացման, անհատի բարեփոխման,մարդու կլոնավորման, ուղեղի փոխպատվաստման,մարդկային և արհեստական ինտելեկտի համադրման և նման այլ հիմնահարցերը: Այս խնդիրների լուծումը տարբեր փուլերում է,այնուհանդերձ հասանելի է մարդուն:

3. Բանապահպանական հիմնախնդրի լուծման ուղիները

3.1 Համամոլորակային մտածողությունը որպես փակուղիներից դուրս գալու միջոց

Բնության պահպանության հիմնախնդիրներն այսօր դուրս են գալիս մեկ երկրի, տարածաշրջանի սահմաններից՝ դառնալով համընդգրկուն: Այլևս կասկածողներ քիչ կան, որ այս պահից մեզ անհրաժեշտ են կենսոլորտի պահպանման լայնամասշտաբ միջոցառումներ, այդ գործում պետությունների և ժողովուրդների ջանքերի համատեղում: Միայն այս պայմաններում մարդկությունը կարող է լիարյուն ապրել և զարգանալ. առավել ևս, որ այս բնույթի հիմնախնդիրների մեկ խմբին փոխարինելու կգան մյուսները: Թե՛ մարդկային հասարակությունը, թե՛ նրա ամեն մի անդամ արդեն իսկ պետք է պատրաստ լինեն այդ առաքելությանը: Այստեղ, որ մենք մերձենում ենք ոչ այնքան մարդկային գործոնի հիմնահարցին, այսինքն՝ բնապահպանական խնդիրների լուծմանըհասարակության անդամների գիտակցական մասնակցության, այդ գործում նրանց պատրաստականության ու պատրաստակամության, էկոլոգիական կուլտուրայի հարցին: Այսօր ամբողջ աշխարհում ձևավորվում է բնության պահպանության քաղաքացիական նախաձեռնության լայն շարժում,որին մասնակցում են հասարակության ամենատարբեր շերտերը: Չնայած այդ շարժման էությունը կառավարությունների, մոնոպոլիաների կողմից բնության գիշատչական շահագործման դեմ մղվող պայքարն է, որը, սակայն, բազմադեմ ու սոցիալ դասային առումով ոչ միատարր լինելով, քիչ թե շատ միասնական տեսական հիմք չունենալով, ենթական է զանազան, հաճախ նույնիսկ ծայրահեղական հայացքների ազդեցության:

Մարդկության ջանքները միջազգային մասշտաբով պետք է կոոպերացվեն ու

նպատակամղվեն հետևյալ ուղղություններով.

- քաղաքակրթության և համամոլորակային շրջակա միջավայրի փոփոխություններում նոր միջազգայնական մտածելակերպի դաստիարակում

- աշխարհում բնակչության թվի խելամիտ կայունացում ու կարգավորում

-շրջակա միջավայրի պահպանության համար անհրաժեշտ տեխնոլոգիաներին (ստեղծում և ներդրում.

- «մաքուր» էներգիայի որոնման ջանքերի կոորդինացում

3.2 Արտադրության և սպառման էկոլոգիական կուլտուրան, որպես բնապահպանական հիմնախնդիրների լուծման միջոց

Անհնար է չհամաձայնվել այն մտքին, որ եթե առաջիկա տասնամյակներում համամոլորակային բնապահպանական հիմնահարցերի արդյունավետ ու համաձայնեցված կարգավորման նպատակով հողագնդի մասշտաբով չստեղծվի հզոր պետություններից և այլ ուժերից անգամ վեր, բավարար լիազորություններով ու իրավունքներով օժտված առանձին համակարգ-կառույց, ապա ապոկալեպսիսի վտանգն անխուսափելի է:

«Էկոլոգիա» և «կուլտուրա» առանցքային հասկացությունների ճիշտ ըմբռնումը կօգնի՝ իմաստավորելու պատմության ընթացքը և մարդու տեղը բնության մեջ, պահպանելու մարդու և բնության, երկրապատկերների ու էթնոսի փոխազդեցության վիթխարի բազմազանության շնորհիվ գոյավորված մշակույթի ազգային արմատները, երկրների ու ժողովուրդների դիմագիծը…

Այստեղ արդեն առաջնաբեմ է մղվում արտադրության և սպառման էկոլոգիական կուլտուրան, դրա միջազգային չափորոշիչների մշակումն ու ընդունումը, քանի որ շրջակա միջավայրի քայքայման գլխավոր պատճառը արտադրության և սպառման կառուցվածքն է, որի հետևանքով խախտվում է էկոհամակարգի և, ամբողջությամբ, կենսոլորտի դինամիկ կայունությունը: Ընդ որում պատճառը ոչ այնքան արտադրատեխնիկական անխուսափելի զարգացումն է, որքան տեխնոլոգիական

անկատարությունը: Տեխնոլոգիական քաղաքակրթության նյութասպառողական, շռայլող ոճն ուժից վեր բեռի նման ընկած է բնության վրա: Իսկ էկոլոգիական կուլտուրան ենթադրում է կենսաապահովման այնպիսի եղանակ, երբ հոգևոր արժեքների, էթիկական սկզբունքների , տնտեսական մեխանիզմների , իրավական նորմերի ու սոցիալական ինստիտուտների միջոցով հասարակությունը կյանքի ապահովման համար անվտանգ պահանջմունքներ և դրանց իրացման եղանակներ է ձևավորում:

Հաջորդ կարևոր գործոնը միջազգային ու միջպետական փոխներգործության կուլտուրան է, որի հիմնական բնութագիրը ազնիվ փոխադարձությունն է,բոլորը բոլորին հավասար դիտելու, իրավահավասար գործընկեության ու երկրների, ժողովուրդների, մշակույթների, դավանանքների միջև երկխոսության հասնելու ռեժիմը: Երկրորդը՝ միաբանում կամ հոգևոր- բարոյական վսեմացում, էթիկական արժեքների նոր համակարգի հիման վրա էկոլոգիական կուլտուրայի ստեղծում և ապա՝ ճգնաժամի պատճառները մարդու անկատարության և իր էութենական ուժերը՝ բարոյական բանականությունը, կամքն ու հոգևոր ներուժը, իրացնելու անկարողության մեջ որոնում:

Համամոլորակային էկոլոգիական կուլտուրան հարուստ և բազմանիստ հասկացություն է ,որը միասնականության և բազմազանության դիալեկտիկայի օրենքով գոյավորվում է տարբեր կուլտուրաների շփումից և փոխհարստացումից: Ելնելով «գլոբալ մտածելու և լոկալ գործելու» իմաստուն կարգախոսից, յուրաքանչյուր երկիր, ամեն մի ժողովուրդ գործը նախ պետք է սկսի իրենից, չապականի ազգային իր տան բնական միջավայրը:

Բնապահպանական հիմնահարցերի լուծման կոնտեքստում ,բնության հանդեպ առանցին երկրների վերաբերմունքը քննարկելիս շատ կարևոր է հաշվի առնել ամերիկացի ականավոր գիտնական Բ. Քոմոնների՝ քառորդ դար առաջ ձևակերպած բնապահպանական չորս օրենքը.

4Բնապահպանության կրթումն ու դաստիարակումը դպրոցում:

4.1 Սոցիալական էկոլոգիա

Բնության հետ մարդու փոխհարաբերություններն ուսումնասիրող գիտությունները բազմաթիվ են ու տարանուն: եթե դրանք խմբավորենք , ապա հիմնական ուղղություններում ուսումնասիրության օբեկտը , նախ, մոլորակի բնական միջավայրի հետ գլոբալ մակարդակով հասարակության փոխհարաբերության, այլ կերպ ամբողջությամբ հողագնդի կենսոլորտին հարաբերվող մարդու փոխառնչության հարցեր են:

Այս ամենը կարգաբերող-համակարգողը , ի տարբերություն առօրյա իմաստով օգտագործվող ավանդական էկոլոգիա հասկացության, որպես կենասմիջավայրի հետ մարդու փոխհարաբերության հիմնախնդիրը կամ գոյություն ունեցող ուղղությունների ամբողջությունն ուսումնասիրող համադրական գիտություն, այսօր արագ զարգացող սոցիալական էկոլոգիան է: Որպես գիտական նոր և բուռն զարգացող ուղղություն՝ սոցիալական էկոլոգիան, հատկապես՝ գլոբալ քաղաքական և սոցիոմշակութային իմաստով գտնվում է սոցիոլոգիայի, էկոլոգիայի, փիլիսոփայության, կուլտուրայի, գիտության և տեխնիկայի այլ ճյուղերի հայրությամբ՝ ստինվելով դրանցից յուրաքանչյուրին:



4.2 Տեխնապաշտական մտածելակերպի հաղթահարումը՝ որպես կրթական համակարգի առաջնային գերակայություն:

Աշխարհը բավականաչափ մեծ է՝ ցանկացած մարդու կարիքները բավարարելու համար և, բայց չափազանց փոքր է,որ բավարարի մարդկային ագահությունը:

Մահաթմա Գանդի

Տեխնապաշտական մտածողությունն ու աշխարհընկալումը հենվում է նպատակի նկատմամբ միջոցի առաջնայնության վրա, համամարդկային , համազգային շահերի շահերի նկատմամբ մասնավոր նպատակի, մարդու և հումանիստական արժեքների նկատմամբ միջոցի առաջնայնության վրա: Տեխնապաշտպանությունն ամենևին էլ մարդկանց որոշ խմբերի, սոցիալական շերտերի անվնաս մտածելակերպ չէ: Վարքագծի վերածված, հասարակակական երևույթների գնահատման, շրջական միջավայրի հանդեպ վերաբերմունքով գործելակերպ դարձած պրագմատիզմի այդ անառողջ դրսևորումը սերունդների հանդեպ հանցագործություն է դառնում: Այս երևույթն անպարագիծ է, նաև՝ «դժվարորսալի», քանի որ «մաքուր» վիճակում չի դրսևորվում: Հանդես է գալիս այլ երևույթների մեջ ներթափանցղված, միահյուսված վիճակում, հաճախ՝ անտեսանելի: հասցրած վիթխարի վնասով հանձերձ՝ նման գործելակերպ ու վարքագիծ ունեցողին քրեական պատասխանատվության չես ենթարկի: Հենց տեխնապաշտական մտածելակերպն էլ մեր հասարակության քաղաքական ինստիտուտների սոցիալական անճարակության, քաղաքագիտական մտածելակերպի պակասի, դրանից սերված՝ քաղաքական ցածր կուլտուրայի, կադրային ճգնաժամի, ի վերջո՝ իշխանության հեղինակության անկման պատճառներից մեկը դարձավ:

Տեխնապաշտությունն աչքի է ընկնում էկոլոգիական անգրագիտությամբ, բնության հանդեպ կիրառվող անհատական ու գերատեսչական զավթողագործությամբ: «Ինդուստրիական եսակենտրոնության », գերատեսչականության, զարգացման տեխնապաշտական միտումների դեմ մղվող պայքարը՝ հանուն բնության պահպանման, սոցիալական հարաբերությունների ներդաշնակման, ներգծվում է արդի հասարակության նորացման հեռանկարներին:

Նոր, նաև սոցիալ- էկոլոգիական մտածելակերպ են պահանջում հողերի յուրացումը, բնակելի զանգվածների կառուցումը, բնության հետ ամենօրյա առնչությունները: Մարդկության ողբերգական վախճանի հեռանկարը հարկադրում է մարդկանց գիտակցությունից դուրս մղել մինչ այժմ գերիշխող անտարբերությունը և մարդկանց կործանող կեղծ լավատեսական տեխնապաշտական մտածելակերպը: Իսկ դա ենթադրում է սոցիալ-բարոյական և տասնյակ այլ գործոնների, այդ թվում առաջին հերթին, որպես քաղաքակրթության զարգացման դեմ ուղղված գործողությունների առողջ հակազդում՝ էկոլոգիական գործոնի հաշվառում: Հասարակական վերակառուցումը ենթադրում է մարդկային գործոնի կարևորում:Կրթական համակարգի գլխավոր գերակայություններից մեկն այդ համակարգի շեշտված հումանիտար ուղղվածությունը պետք է լինի. Ցանկացած խավի, այդ թվում տեխնիկական մտավորականության համար առանձնապես անհրաժեշտ է լեզվի, գրականության քաջիմացության, գեղանկարչության, ընդհանուր և սոցիալական հոգեբանության, արվեստի մեջ կոմնորոշվելու ունակություն: Այս կարգի կրթությունը կնպաստի զուտ մարդկային բարձրակարգ հատկանիշների՝ հայրենասիրության, օրինավորության, անկաշառության, անանձնականության, չարն ու բարին տարորոշելու, քաղաքական և էկոլոգիական կուլտուրայի և այլ ունակությունների ու հատկանիշների դաստիարակությանը : Համամարդկային արժեքներին հաղորդակցվելը «նեղ» մասնագետին հնարավորություն կընձեռի ավելի լայնորեն ու խոր ընկալելու շրջակա աշխարհը: Հումանիստական այս հիմքի վրա պիտի աճեն «նեղ» ուղղությունների մասնագետները, գիտնականներ, ինժեներներ, գործարար մարդիկ: Տեխնիկականացված աշխարհով ապրող, տեխնիկայի դերը գերագնահատող, «գործամոլական ռացիոնալիզմով» տառապող մարդկանց ուշադրությունը մշտապես պետք է հրավիրել գիտատեխնիկական հեղափոխության աշխարհայացքային կողմին, սոցիալ-քաղաքական ու էկոլոգիական հետևանքներին: Դրությունը պետք է արմատապես շտկել. Ըստ որում հիմնական շեշտը պետք է դրվի մարդկային գործոնի վրա:

Եզրակացություն և առաջարկություններ

«Մարդը ծնվում է բնության արքան, տերն ու տիրակալը լինելու համար,բայց իմաստությունը,որով նա պիտի կարողանա կառավարել, իրեն ի ծնե չի տրվում, այլ ձեռք է բերվում դաստիարակության և ուսման շնորհիվ»

Ն. Լոբաչևսկի

Այսպիսով մուտք գործելով XXI դար՝ մարդն արդեն իսկ զգում է, որ իր էությունը հոգևոր վերլուծության կարիք ունի: Դա սոսկ բնազդական մղման արգասիք չէ, ամենից առաջ բխում է մարդկային մեծագույն ներուժից՝ հոգու և իմաստության ունակությունից: «Տեսնելով» ու գնահատելով ի՛ր իսկ ներսում , արտաքին աշխարհում առկա հակասությունները՝ մարդն սկսում է խորությամբ ըմբռնել, որ ինքը տիեզերականի մի փոքրիկ մասնիկն է, տարրերից մեկը: Դա զգացում է, որ հիմք է դառնում հումանիստական աշխարհըմբռնման համար:

Երկիր մոլորակը մարդկության բնակության կացարանն է, Հայաստանը՝ մեր փոքրիկ բնակարանը: Մարդը պիտի սովորի կառավարել և՛ իրեն, և՛ մոլորակի գործերը, կառավարի այնպես,որ չխաթարվեն հողագնդի վրա մարդկային կյանքի պայմանները, պահպանվի գոնե առկա վիճակը (հետագա ավելի նվազ կորուստներով)՝ նաև գալիք սերունդների համար:

Դրա համար անհրաժեշտ է.

-բնապահպանական կրթության համալիրություն՝միջառարկայական կապերի հաշվառումով:

- գիտելիքների գործնական կիրառում ամենօրյա կյանքում,բնապահպանական վարքի համապատասխան ունակությունների ձևավորում

- էկոլոգիական գիտելիքների սոցիալականություն, որն առնչվում է անհատական վարքի ոլորտին և ձևավորում է ներկա սերնդի պատասխանատվություն ապագայի հանդեպ:

Առաջարկություններ

1. Դպրոցական դասընթացում,հատկապես ավագ դպրոցում, ավելացնել բնապահպանական գիտելիքների գործական կիրառությունը, սովորողների մասնակցությունը երկրում իրականցվող հասարակական բնապահպանական միջոցառումներին:

2. Անպայման ունենալ դպրոցամերձ հողամաս, որտեղ երեխաները կցանեն, կտնկեն, կմշակեն հողը, կենդանիներ կպահեն: Անմիջական շփումը բնության հետ սեր է առաջացնում ու այն պահպանելու ցանկություն:

Գրականություն

1. Աղաջանյան Ն. Ա. Մարդը կարող ա ապրել ամենուր- Երևան 1985
2. Հայրապետյան Է. Մ. Բնության պահպանության հիմունքները- Երևան 1983
3. Գասպարյան Ա. Վալեսյան Լ. Բնօգտագործման և բնապահպանության հիմունքներ
4. Մարուխյան Ռ. Շրջակա միջավայրի պահպանություն- Երևան 2002
5. Մարուխյան Ռ. Անձի էկոլոգիական կուլտուրան- Երևան 2005
6. Շահինյան Ս. Էկոլոգիա- Երևան 2002
7. Мазур И.И. Путь к экологической культуре- Москва 2001
8. Потапов А. Д. Эколвгия- Москва 2003
9.https://ru.wikipedia.org/wiki/%D0%9E%D1%85%D1%80%D0%B0%D0%BD%D0%B0_%D0%BF%D1%80%D0%B8%D1%80%D0%BE%D0%B4%D1%8B
10. https://www.kp.ru/guide/okhrana-okruzhajushchei-sredy.html